ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
2019 Թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հաշվետու ժամանակում ակադեմիայում իրականացվել են աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

- որակավորման բարձրացում,
- հրշեջ-փրկարարների վերապատրաստում, որակավորման բարձրացում,
- բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում,
- բնակչության ուսուցում,
- գիտամեթոդական աշխատանքների կատարում,
- մշակութային դաստիարակության աշխատանքների կատարում,
- միջազգային համագործակցություն,
- լրացուցիչ աշխատանքներ:

1. Ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում.

2019 ուս. տարում ակադեմիայում վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթաց է անցել 2206 ունկնդիր (պլան՝ 2000 ունկնդիր) 87 ուսումնական խմբում (պլան՝ 83 խումբ):

Հաշվետու ժամանակաշրջանում վերապատրաստվել է ՝

- ՀՀ պետական կառավարման հանրապետական մարմիններից՝ 523 ունկնդիր.
- ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 470 ունկնդիր.
- Երևանի քաղաքապետարանից և Երևան քաղաքի վարչական շրջաններից՝ 1188 ունկնդիր.
- Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ «Կլոր սեղան» հիմնադրամից՝ 16 ունկնդիր.
- ՀՀ կենտրոնական բանկից՝ 9 ունկնդիր:

«Առևտրային կազմակերպությունների հրդեհային անվտանգության ապահովումը և տարահանման կազմակերպումը» թեմայով իրականացվել է 3-օրյա դասընթաց Երևան քաղաքի խոշոր առևտրային կենտրոնների անվտանգության աշխատակիցների մասնակցությամբ:

2019 ուս. տարվա ունկնդիրների պատրաստման գրաֆիկի համաձայն իրականացվել են արտագնա դասընթացներ՝ *Լոռու* (Լոռի Բերդ համայնք, Կուրթանի միջնակարգ դպրոց) և *Շիրակի* (Մայիսյան համայնք, Մարալիկի թ.1 դպրոց) մարզեր:

2. Հրշեջ-փրկարարների վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ.

1) Հաշվետու ժամանակահատվածում ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետում ԱԻՆ ՓԾ ծառայողների 2019թ.-ի դասընթացների պլան-ժամանակացույցի համաձայն դասընթացներին, առարկայական ստուգարքներին մասնակցել են 207 ՓԾ ծառայողներ, պլան ժամանալացույցով նախատեսված 319-ի փոխարեն (Արարատի և Արմավիրի ներքին որակավորման արագ արձագանքման թիմերի վերապատրաստում տեղի չի ունեցել (94 մասնակից)):

2) Հաշվետու ժամանակահատվածում ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետի անձնակազմի կողմից կազմակերպված ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետում ՓԾ ծառայողների 2019թ.-ի դասընթացների պլան-ժամանակացույցով չպլանավորված դասընթացներին, մասնակցել է 247 ունկնդիր:

Այսպիսով՝ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետում ՓԾ ծառայողների 2019թ.-ի դասընթացների պլան-ժամանակացույցի համաձայն, դասընթացներին, առարկայական ստուգարքներին մասնակցել են 454 ունկնդիրներ, պլան ժամանալացույցով նախատեսված 319-ի փոխարեն:

4) Նույն ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել են ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությունում ծառայության անցնողների եռամսյա ուսումնական փորձաշրջանի դասընթացներ անցնողների ստուգարքները: 219 մասնակից, որից փորձաշրջանն ավարտել են 167-ը, փորձաշրջանում են գտնվում 47-ը, 3-ը հրաժարվել են, 2-ը հեռացվել է (20.12.2019թ. դրությամբ):

3. Բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում.

Ուսանողների թիվը	***Բակալավրի կրթական ծրագիր***		***Մագիստրոսի կրթական ծրագիր***	***Միջին մասնագիտական կրթական ծրագիր***
	առկա	հեռակա	հեռակա	
Ընդունվել է՝	**71, որից 39-ը՝ անվճար**	**124, II կուրս՝ 17**	**31**	**87**
Ավարտել է՝ 251	***59***	***119***	***20***	***53***
վերականգնված	27	83	-	2
ազատված /ազգային բանակ	20	41	-	2
ազատված /այլ պատճառով	25	80	-	6
ԸՆԴԱՄԵՆԸ ուսանողների թիվը 27.12.2019 թ. դրությամբ	**254, որից 146-ը անվճար**	**565**	**50**	**204**

Այսպիսով՝

1. ***Բակալավրի կրթական ծրագրով ուսանողների թիվը 819 է,***
2. ***Մագիստրոսի կրթական ծրագրով ուսանողների թիվը՝ 50,***
3. ***միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորողների թիվը՝ 204:***

Առ 27.12.2019 թ. ակադեմիայում սովորում է 1073 ուսանող:

2018-2019թթ. աշխատանքի ընդունված շրջանավարտների թիվը ԱԻ նախարարության տարբեր ստորաբաժանումներում կազմում է շուրջ 70 հոգի:

4. Բնակչության ուսուցում.

Բնակչության ուսուցման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- արտակարգ իրավիճակներից պաշտպանության հարցերով ելույթներ զանգվածային լրատվամիջոցներով:
- Հաշվետու տարում Հայաստանի հանրային հեռուստաալիքով և հանրային ռադիոյով իրականացվել է մասնագիտական հաղորդաշար, նվիրված արտակարգ իրավիճակ առաջացնող Հայաստանին սպառնացող վտանգներին, և տեղադրվել են ինչպես իրենց կայքում, այնպես էլ ԱԻՆ-ի և Ակադեմիայի կայք էջերում (առկա է շուրջ 40 ֆիլմ տեսահոլովակ):

- Բնակչության ուսուցման նպատակով ստեղծվել է էլեկտրոնային հարթակ՝ դիմակայուն գրադարան- http://library.cmsa.am/hy/

5. Գիտամեթոդական աշխատանքների կատարում.

Հաշվետու ժամանակահատվածում՝

- Հրատարակվել է «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդեսի 2 համար (ընդգրկված է 76 հոդված, որից շուրջ 45-ը գրվել է ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից), շուրջ 30 ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք, «Ճգնաժամ հաղթահարողները» ուսանողական թերթը:
- Տրվել են կարծիքներ 5 գիտական աշխատանքների վերաբերյալ:
- Ղեկավարվել է 20 մագիստրոսական թեզ:
- Մշակվել են կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր և այլ փաստաթղթեր կրթության զարգացման և որակի ապահովման ուղղությամբ:
- Լրամշակվել են բակալավրի, մագիստրոսի և միջին մասնագիտական կրթական ծրագրերը և ուսումնական պլանները, ժամանակացույցերն ու առարկայական նկարագրերը:
- Ներկայացվել են շուրջ 40 զեկուցումներ միջազգային գիտական, գիտագործնական խորհրդակցություններում և խորհրդաժողովներում:
- Իրականացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գնահատում՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագետների խմբի կողմից:

6. Մշակութային դաստիարակության աշխատանքների կատարում.

Հաշվետու տարում մշակութային դաստիարակության աշխատանքների կատարման ուղղությամբ ուսանողներն իրականացրել են միջոցառումներ մի շարք դպրոցներում, մանկապարտեզներում և այլն:

7. Միջազգային համագործակցություն.

Ակադեմիան իրականացրել է ուսուցման միջազգային ծրագրեր

- համագործակցություն Ֆրանսիայի ՄԳՇՄԱԱ (մարդկանց, գույքի և շրջակա միջավայրի անվտանգության խթանման ասոցացիա) հետ,
- Շարունակվել է ՄԱԿ-ի UNDP-ի, unisef-ի, Սեյվ դը Չիլդրն-ի համագործակցությունը,
- մասնակցել է մի շարք գիտագործնական սեմինարների Ռուսաստանի Դաշնությունում, Մոլդովայի, Վրաստանի և Հայաստանի Հանրապետություններում:

Առկա թերություններ.

- շենքային պայմանների անբավարարություն,
- դիմորդների թվի նվազում,
- գիտափորձարարական լաբորատորիաների անբավարարություն:

Լրացուցիչ աշխատանքներ.

Իրականացվել են՝

- ինստիտուցիոնալ հավատարմագրման ուղղությամբ աշխատանքներ:
- Հեռավար (դիստանցիոն) ուսուցման ներդրման հարցերի ուսումնասիման և ներդրման աշխատանքներ:
- Առցանց միջազգային գիտաժողովի կազմակերպում և նյութերի հրատարակում:
- թվով 12 տարբեր թեմաներով ուսումնավարժությունների կազմակերպման և վերահսկման աշխատանքներին մասնակցություն,
- Ռուսաստանի Դաշնության (Կրասնոյարսկ)՝ Սիբիրի տարածաշրջանային որոնողափրկարարական ջոկատի բազայում կայանալիք «KoBo Toolbox» հատուկ ծրագրային ապահովման կիրառման ուսումնական դասընթացին մասնակցություն,
- Ակադեմիայի կայքի բարելավման ուղղությամբ աշխատանքների լավարկում:
- մասնակցություն «Կրթություն և կարիերա» EXPO 2019-ին:

Առաջին անգամ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ակադեմիան նոր համագործակցություն է սկսել Ռուսաստանի դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման նախարարության «Քաղաքացիական պաշտպանության ակադեմիայի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հետ:
- 2019թ-ին Ակադեմիային թույլատրվեց իրականացնել նաև ասպիրանտական կրթություն: ***2019թ.-ին Ակադեմիային*** ՀՀ ԿԳՆ ԲՈԿ-ի կողմից թույլատրվել է հաստատելու ատենախոսության թեմա «***Երկրաբնապահպանություն***» ***մասնագիտությամբ և իրականացվել է ընդունելություն*** (1 հայցորդ):

- ***2019թ.-ին Ակադեմիային*** ՀՀ ԿԳՆ ԲՈԿ-ի կողմից Ակադեմիան ընտրվել է որպես գիտական աստիճանի հայցման ատենախոսության առաջատար կազմակերպություն:
- Գիտական և փորձարարական մեծ աշխատանքներ են տարվել անօդաչու թռչող սարքերի ոլորտում, ձեռք է բերվել անօդաչու թռչող սարք: Փորձ է արվում գիտական հիմքերի վրա դնել ԱԹՍ-ների կիրառումը մեր ոլորտում: Աշխատանքներ են տարվում GIS քարտեզների քարտեզագրման ուղղությամբ:
- Առաջին անգամ ներդրվել են հեռավար ուսուցման էլեկտրոնային մոդուլներ:

2020 թվականին նախատեսվող աշխատանքներ

- ինստիտուցիոնալ հավատարմագրման ուղղված միջազգային գործունեության ակտիվացում:
- «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդեսի հերթական համարների հրատարակում:
- «911 արտակարգ շաբաթաթերթ»-ի էլեկտրոնային տարբերակի զարգացման ապահովում:
- Ոլորտում գիտահետազոտական աշխատանքների շարունակում:
- Էլեկտրոնային գրադարանի հարստացում:
- Առցանց հարթակում միջազգային գիտաժողովի կազմակերպում
- «Պատանի փրկարար» վարժարանի հիմնադրում Ակադեմիայի կառուցվածքում: Նոր մասնագիտությունների ներդրում ասպիրանտական մակարդակում:
- Ակադեմիայի շենքային պայմանների բարելավում:

Փ/Ծ ԳԵՆԵՐԱԼ- ՄԱՅՈՐ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ